



“ԹՈՂ ՏՈՒԵՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԲ.


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1903

ԹԻԻ 2

ՇԱՆԿՀԱՅ

Շանկհայ Չինաստանի ամենէն կա-
րևոր նաւահանգիստն է: Անկա իբրև
քաղաք մեծ չէ Բանթոնի և Չինաց ուրիշ
քանի մը քաղաքներուն չափ, թէպէտ
վերջին մարդահամարը կը ցուցնէր թէ
615,300 բնակիչ ունի: Բայց վաճառա-
կանութեան մեծ կեդրոնն է, վասն զի

անոր դուրս զրկած
ապրանքներուն ար-
ժէքը գրեթէ հա-
ւասար է օտարազ-
գիներու առջև բաց
եղող Չինական բո-
լոր միւս քանքերովը
նաւահանգիստնե-
րուն ամենուն մէկ-
տեղ դուրս զրկած
վաճառքներուն ար-
ժէքին: Մետաքսն
ու թէյը անոր դուրս
զրկած վաճառքնե-
րուն գլխաւորներն
են: Եւ շահեկան է
մտածել թէ հե-
ռուն, Եւրոպայի և



Ամերիկայի մէջ բնակող հազարաւոր
տիկիներ և օրիորդներ իրենց ամե-
նաչքեղ զգեստները և սիրելի ըմպե-
լին կը պարտին Չինացոց ճարտա-
րութեան և աշխատասիրութեան:
Քաղաքը իր կարևորութիւնը կը ստա-
նայ երկու պատճառներէ, որոնց մէկն
է սա որ ունի գեղեցիկ նաւահան-
գիստ մը, և միւսը որ Եանկեյքեանկ
գետին բերնին կ'իջի: Եանկեյքեանկ
Չինաստանի ամենէն մեծ գետն է:
Շանկհայ ճիշդ Եանկեյքեանկի վրայ
չգտնուիր, այլ Ուուզընկի վրայ, որ
Եանկեյքեանկի մէջ կը թափի անոր
բերնին մտ: 1842ին էր որ այս նա-
ւահանգիստը առաջին անգամ բաց-
ուեցաւ արտաքին վաճառականու-
թեան, և հիմա հոն կը գտնուի օ-

տարազգի մեծ գաղութ մը Եւրոպայի
և Ամերիկայի վաճառականներէ և ա-
նոնց ընտանիքներէն բաղկացած: Հոս
ներկայացուած եկեղեցին Բրիտանա-
կան գաղութին կը պատկանի:

ԱՂՕԹԵԼ ԿԵՍ ՍԵՆԵԱԿԻՄԷՋ
Պոսթընի մտ մեծ և պատուաւոր

է, և կ'ուզեմ շարունակել զանիկա,”
ըսաւ պղտիկը: “Ես չեմ ուզեր որ
մէկը աղօթք ընէ այս սենեակին մէջ,
և պիտի չթողում,” պատասխանեց
միւսը: Պղտիկը ելաւ կամաց մը, գնաց
սենեակին մէջտեղը, և կայնելով կա-
պերտին այն եղբը որ սենեակը գրեթէ
հաւասարապէս երկուքի կը բաժնէր,
ըսաւ հանդարտութեամբ, “Մյս սեն-

եակին կէսը իմն
է: Ես կը վճարեմ
անոր վարձքը: Կըր-
նաք ընտրել ձեզի
ո՞ր կէսը որ կ'ու-
ղէք: Ես միւս կէսը
պիտի առնեմ, ու
այն կէսին վարձքը
պիտի վճարեմ, կամ
ուրիշ սենեակ մը
պիտի վարձեմ: Բայց
աղօթք պիտի ընեմ,
դուք հաւանիք՝ թէ
ոչ:” Մեծ տղան
յաղթուեցաւ անմի-
շապէս: Մինչև այսօր
կը հիանայ այն ան-
դրդուելի կամքին

դպրոցի մը մէջ տարբեր նահանգնե-
րէ և իրարու անծանօթ երկու տղաք
ստիպուած էին մէկ սենեակի մէջ
բնակիլ: Դպրոցական չըջանին սկիզբն
էր, և երկու տղաքը առաջին օրը
անցուցին իրենց սենեակը կարգադրե-
լով և իրարու ծանօթանալով: Երբ
գեղերն եկաւ, այս երկու տղոց պղտի-
կը ըսաւ միւսին, թէ աղէկ չէ՞ր ըլլար
օրը վերջացնել Մուրը Գիրքէն համա-
ռօտ մաս մը կարդալով և աղօթք ը-
նելով: Այս հարցումը համեստու-
թեամբ եղաւ, առանց ուէ ձևի,
բայց միւս տղան կոպտութեամբ մեր-
ժեց առաջարկութիւնը: “Ուրեմն կը
յուսամ թէ չէք առարկեր եթէ ես
առանձին աղօթեմ. իմ սովորութիւնս

վրայ որով ան իբրև իրաւունք կը
պահանջէր ինչ որ ինք բրտութեամբ
կը դժկամակէր տալ իբրև անոր ար-
տօնութիւնը: Բրիտանաց մը իր շնչե-
լուն համար ալ հրաման խնդրելու է
եթէ պարտի խնդրել աղօթելու թոյլ-
տուութիւն:

Բրիտանացական վարմունքի մէջ ան-
տեղի համեստութիւն մը կայ, որ պար-
տականութիւններ կատարելու ար-
գելք կ'ըլլայ: Եթէ կայ պատուաւոր
բան մը, այն է արիւթիւնը որ կը
ճանչնայ իրաւունքը և կը համարձա-
կի ի գոցժ զնեւ զայն առանց ուէ
մէկէն թոյլտուութիւն կամ հրաման
խնդրելու:

---><---

ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ՔԱՐՈՉԵԼ

Ասկէ գրեթէ յիսուն տարի առաջ ես տղայ էի, կ'ըսէ Պատ. Տր. Ճ. Ս. Սայմինս, և կը յիշեմ թէ կիրակի առաւօտ մը ծանուցուեցաւ եկեղեցիին մէջ թէ քարոզիչ մը տղոց պիտի քարոզէ կէսօրէն ետքը: Ես առաջ չէի լսած որ քարոզիչ մը ամբողջ քարոզ մը խօսի տղոց, ուստի շատ փափաքեցայ լսել զանիկա: Քարոզիչը երկուշնահասակ, նիհար և հիւանդոտ երեւոյթով մարդ մըն էր վասն զի հիւսնախաւեր էր, բայց կը սիրէր տղաքը և անոնց բարեքը ընել կ'ուզէր: Երբ ժամը եկաւ, փոքրիկ եկեղեցին լեցուեցաւ աղէկ մը, և քարոզիչը երգեց և աղօթելէ ետքը ձեռք առաւ բնաբանը, որ էր, «Սրիւր ձեր բարկութեանը վրայ մարդ չ'իտնէ»: Ոչնչէ ի վեր երկայն ժամանակ անցած է: Չեմ յիշեր քարոզչին անունը, ոչ ալ թէ ուրկէ՛ եկաւ, ոչ ալ թէ ի՞նչ եղաւ անոր, բայց երբեք մոռցուած չեն այդ բնաբանը և անոր իմ մատղաշ մտքիս վրայ ըրած տպաւորութիւնը: Ոչ ցուցուց մեզի թէ բնաբանը ի՞նչ կը սորվեցնէ: Ըսաւ մեզի թէ «Տղոց բնական է որ իրարու բարկանան երբեմն երբեմն, բայց բարկութեան պատճառը ի՞նչ ալ ըլլայ, որչափ մեծ բան ալ ըլլայ, պէտք չէ որ բարկութիւն պահենք մեր սիրտերուն մէջ, գիշերուան հասնելէն առաջ պէտք է որ արտաքսենք բարկութիւնը ամբողջ, բարկութիւնը մեր սիրտերուն մէջ ունենալով անկողին մտնել, քնանալ, ահաւոր մեղք է Աստուծոյ առջև»: Կը յիշեմ թէ արեւը շուտ մարը մտնելու վրայ էր, և թէ մեր առջև կայ-

Ես այնքան ազդուեցայ այն քարոզչէն որ ուզեցի ներել աշխարհիս մէջ ամէնէն մեծ թշնամիս անգամ, և քարոզչին ներգործութիւնը ընաւ ջնջուեցաւ մտքէս:



ՆԻՔՈՒԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԱՓՈՂԻ
1902 Յունուար 18 թիւ շաբաթաթերթ Ուեբ-Քելին մէջ այս արժանաւոր եկեղեցականին մէկ պատմութիւնը գրիւք: Ոչնչէ սազնուական ընտանիքի մը զաւակն է և կանտոնի փափաք զգաց Քրիստոնէութեան լոյսը կռապաշտ երկիր մը տանելու: Այս նպատակը իր մտքին մէջ ունենալով, երբ 24 տա-

րութիւնն այնքան յայտնի է, որ անոր ազդեցութիւնը մեծ եղած է: 1900ին մկրտեց 1,099 հոգի, և Յունական եկեղեցիին յարած ճափոնցիներուն թիւն է 25,994:

Նիքոլա եպիսկոպոս եղբայրական յարաբերութիւն կը պահէ Քրիստոնէայ միւս եկեղեցիներուն հետ: Երբեւեքի բաժին մը ունեցած է Աստուածաշնչին թարգմանութեան և շրջաբերութեան մէջ, և կը քարոզէ զուտ Աւետարանը: Այնպիսի մարդ մըն է զոր կրնան պատուել, մեծարել Քրիստոնէայ բոլոր եկեղեցիները:



ՈՐՈ՞ՒՆ Է ԱՅՆ ԳԱՌՆՈՒԿԸ
Երկու հոգի կ'երթային ճամբէ մը, ճիշդը խօսելով երեք էին անոնք, գառնուկ մըն ալ հաշուելով այդ երկուքին հետ: Երկու մարդիկը առջևէ կը քալէին և գառնուկը կը հետևէր անոնց: «Սոյդ երկու մարդոցմէ որմն է այդ գառնուկը», հարցուց պզտիկ տղայ մը իր ընկերին որ կ'անցնէր իր քովէն: «Հիմա անկարելի է գիտնալ, բայց եթէ անոնք իրարմէ զատուին, շուտով պիտի հասնանք», ըսաւ միւս աւելի խմտուն տղան: Եւ իրօք, երբ ճամբորդները ճամբուն վրայ քիչ մը առաջ գացին և հասան երկու ճամբաներու, անոնցմէ մէկը բռնեց ալ ճամբան և միւսը ձախք: և գառնուկը իսկոյն առաջինին ետևէն գնաց: «Ստիկա է գառնուկին տէրը», ըսին իսկոյն երկու տղաքն ալ: Եւ գուք, փոքրիկ ընթերցողներ, մը տէրոջ կը վերաբերիք ամէն մէկդ: Բարի Հովիւի՛ն թէ անգութ Փորձիչին: Չեզի համար չկայ միջին ճամբայ մը, պէտք է որ վերաբերիք մէկուն կամ միւսին: Երբեմն կրնայ պատահիլ որ բաներ որ տարակուսելի մնան, ինչպէս եղաւ վերոյիշեալ գառնուկին այն երկու մարդոցմէն որուն ըլլալը, բայց կու գայ ժամանակ երբ անկարելի է որ տարակոյտ մնայ: Երկու ճամբաներ կը տեսնուին: Ընտրելու էք անոնցմէ մէկը:

նած այդ տեղոյն քարոզիչը դարձաւ և իր երկար և նիհար սակրուտ մատով մեզի ցուցուց մարը մտնող արևը և ըսաւ, «Տղաք, տեսէք արևը վար կ'իջնէ: Այս առաւօտ անիկա հոն Արևելքն էր, բայց բոլոր օրը ճամբորդեց դէպ Արևմուտք, և այս երկայն շուքերը կ'իմացնեն մեզի թէ անիկա շուտով վար պիտի իջնէ և անյայտ ըլլայ: Լսեցէք, Աստուած կը խօսի ձեզի: «Արեւ յեր Բաբելոնի և Երուսաղէմի»: Երբ Երուսաղէմը քարոզութիւնը սրտաքսեցէք բոլորովին: Ժամանակ մի կորսնցնէք: անիկա ձեզի չսպասեր, Հրամանը վճռական է: Չգեցէք ձեր բարկութիւնը, եթէ ոչ Աստուծոյ բարկութիւնը կը հրակիրէք ձեր վրայ: Անոր չհնազանդելուդ համար:»

րեկան էր, ճարձիկ Ռուսական դեպանտան մատրանապետ եղաւ, և իսկոյն սկսաւ ուսանիլ ճափոններէն, օրը 14 ժամ նուիրելով անոր: Ենորհիւ իր այս հաւատարիմ աշխատութեան, տիրացաւ տղա լեզուին և այնպէս լաւ կը խօսի զայն որ քիչ օտարազգիներ կարող եղած են հաւասարիլ իրեն: 1869ին անոր գործը Ռուսոյ Սինոդին հովանաւորութեան ներքեւ առնուեցաւ, և անկէ ի վեր անխնջ կ'աշխատի եկեղեցիներ և դպրոցներ հիմնելու, և կարելի ամէն կերպով տարածելու Քրիստոնէութեան լոյսը: Թէպէտ Ռուսերն այնքան սիրելի եղած չեն ճափոնի մէջ, սակայն անոր նկարագիրն այնպէս ուղիղ և շարժառիթներուն մաք-


րութիւնն այնքան յայտնի է, որ անոր ազդեցութիւնը մեծ եղած է: 1900ին մկրտեց 1,099 հոգի, և Յունական եկեղեցիին յարած ճափոնցիներուն թիւն է 25,994:



ՄՕՐ ՄԸ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Առհասարակ լուրեր Սնդղիբերէն լրագիրը, հետեւեալը կը գրէ և կը ցուցնէ թէ մօր մը քաջութիւնն ու արիւթիւնը ինչպէս ազատեց իր մանուկը աւելի քաջ և արի գտնուելով քան առիւծը որ գողցած էր մանուկը:

Օր մը յիշեալ մայրը իր փոքրիկ մանուկը տանը մօտ թողած էր խաղալու, և հաս եկաւ առիւծ մը և զանհիկա բերանն առնելով տարաւ: Որովհետեւ մանկիկը հանդերձներ հագած էր և առիւծը զգուշութեամբ կը տանէր զանհիկա ինչպէս կատու մը կը տանի իր ձագերը, անոր ահուաները չգնատեցին մանուկը: Մանուկը չվախցաւ շատ պզտիկ ըլլալուն համար: Շատ չանցած մայրը դուրս ելաւ տնէն: Առջին անգին նայեցաւ, բայց տղան չգտաւ: Վերջապէս տեսաւ առիւծի մը ոտքերուն նոր հետքերը գետնին վրայ: Այն ատեն հասկցաւ թէ ինչ եղած էր մանուկը: Վազեց դէպ ի այն տեղ ուր իր այրը կը գործէր և պուռաց անոր, «Չաւակս առիւծ մը տարեր է: Շո՛ւտ ըրէ, շո՛ւտ, անոր ոտքին հետքերը գտայ»: Այն ատեն այրը գազանին ոտքի հետքերուն հետեւելով գնաց անապատ, մինչև որ



եկաւ մացառուտը ուր գտաւ առիւծին որջը: Կամացուկ մը մօտեցաւ ոտքի մատերուն ծայրերուն վրայ կոխելով, հրացանը շտկած ու իր առջև բռնած և առիւծը տեսնելուն պէս կրակելու պատրաստ: Գրեթէ առանց շնչելու նայեցաւ տերևներուն և ճիւղերուն մէջէն: Հոն էր առիւծը: Բայց ճիշդ երբ պիտի կրակէր հրացանը, տեսաւ որ իր մանկիկը առիւծին ճիւղաններուն մէջ էր: Երկուքն ալ կը քնանային, և ինք չէր կրնար սպաննել մէկը առանց միւսն ալ սպաննելու: «Ինչ պիտի րնեմ», ըսաւ ինք իրեն, «չեմ համարձակիր կրակել, չեմ համարձակիր առիւծը որթնցնել, և չեմ համարձակիր զաւակս առնել»:

Այն ատեն անոր կինը եկաւ, շունչը կտրած: Մարդը աչք ըրաւ անոր որ ձայն չհանէ բայց նայի: Կինը գրեթէ խելքին եկաւ, և սեպէ թէ կը նուազէր: Ինչ կրնային ընել: Բայց կնոջ հանձարը շատ անգամ աւելի լաւ և արագ է քան այլ մարդուն տրամա-

բանութիւնը: Կինը մեղմով փսփոսաց, «Ի՞նչ մը անդին գնա, և ձայն հանէ: Ես առիւծին որջին քովիկը պիտի պահուրտիմ: Երբ առիւծը արթննայ հանած ձայնէդ, պիտի ելլէ հասկնալու համար թէ ինչ կայ: Այն ատեն քիչ մը ձայն ալ կը հանես, և գաղաւը պիտի ձգէ մանկիկը հասկնալու համար թէ ինչ ձայն է այն: Այն միջոցին ես գաղտուկ մը որջը կը մտնեմ և կ'առնեմ մանկիկը»:

Այրը գիտէր թէ այսպէս ընելով վտանգի մէջ պիտի դնէր իր կեանքը: Բայց յայտնի է թէ ծնողքներ կ'ընեն գրեթէ ամէն բան իրենց զաւակը վտանգէ ազատելու համար: Տարակոյս չունէր թէ երբ առիւծը իր կողմը գար և զինք տեսնէր, իր վրայ պիտի յարձակէր: Բայց ձեռքը հրացանն ունէր և ինք

կալույրը հանգուցեալ վիքթորիա թագուհին, և այն տեղը ուր մեռաւ ան: Այն գիտի ծովեզրէն բաժնուած է նեղ նեղուցով մը որ Սոյնթ կը կոչուի, և այնպէս դիւրին է անոր մօտենալ, որ երբ Լուսուր թագաւոր սկսաւ առողջանալ իր վրայ կատարուած վիրարութեան գործողութենէն, որուն պատճառաւ թագադրութեան հանդէսները յապաղուեցան, իր գրօսանաւով կղզին անցաւ անոր հանդարտ և մաքուր օդին համար: Ուայթ կըզգիին տարածութիւն է միայն 145 քառակուսի մղոն: Այսինքն եթէ անհիկա քառակուսի ձևով ըլլար, իւրաքանչիւր կողմ վաստիորի երկայնութենէն պակաս պիտի ըլլար: Բնակիչներուն մեծ մասը կա՛մ երկրագործ են, կա՛մ խաշնարած: Հիւժախտաւորներու համար ընդարձակ հիւանդանոց մը կայ հոն: Եւ կլիմային մեղմութեան և տեսարանին գեղեցկութեան պատճառաւ շատ գրօսաշրջիկներ կ'երթան այս կղզին: Պատկերին մէջ տեսնուած ժայռերը, որ Ասեղներ կը կոչուին, թերևս անոնց սուր ըլլալուն համար, կղզիին ծայրը կը գրանուին, և աւելի հեռու գտնուողէն անդին կը տեսնէք փարոսի մը մէկ մասը: Բրիտանական ջրանցքը մեծ ճամբայ մըն է նաւերու համար, և մառախուղը շատ անգամ կը պատէ զանհիկա: Ուստի փարօսը անհրաժեշտ է:

քաջ մարդ մըն էր: Ուստի կամացուկ մը մացառուտը մտաւ և ձայն մը հանեց: Առիւծը արթնցաւ ձայնէն և առջևի ոտքերուն վրայ կայնեցաւ տեսնելու համար թէ ինչ կայ: Այն ատեն մարդը նորէն հանեց քիչ մը ձայն, և առիւծը գաղտուկ մը եկաւ դէպ ի ձայնը: Մարդը կամացուկ մը ետ քաշուեցաւ, առիւծը իր կողմ քաշելու համար, և այսպէս մայրը կարող եղաւ որջը մտնել: Ճիշդ երբ առիւծը մարդուն վրայ պիտի յարձակէր, մարդը կրակեց հրացանը: Առիւծը սպաննուեցաւ և գետին փռուեցաւ: Կինը արդէն որջը մտած և մանկիկը ազատած էր: Հիմա դուրս ելաւ և մանկիկին առած տուն վազեց կրցածին չափ արագ: Մարդը հանեց առիւծին մորթը և իր կնոջ հետեւեցաւ գեղեցիկ թաւամազ զգեստով մը:

ՈՒՍՅՈՒՆ ԿՂՁԻՆ

Այս փոքրիկ կղզին ծանօթ է գլխաւորապէս իբրև սիրելի ձմեռանային բնա-

կան ջրանցքը մեծ ճամբայ մըն է նաւերու համար, և մառախուղը շատ անգամ կը պատէ զանհիկա: Ուստի փարօսը անհրաժեշտ է:

ՍՈՒՂ ԼՐԱԳԻՐ ՄԸ

Շատ մարդոց անյաջողութեան պատճառը կրնայ ըլլալ ինքնին չնչին եղող պարագայ մը, բայց կը յայտնէ նկարագիր մը որ կենսական կարևորութիւն ունի: Հետագայ դէպքը լաւ կը լուսարանէ այս իրողութիւնը:

Շոգեկառքի կասեցուցիչ մը լրագիր մը ծախու առաւ Պոսթընի ծայրը գտնուող կայարանին մէջ: Կառախուժը ճամբայ ելլելու վրայ էր, և ինք լրագիրը նստարանին մը վրայ դրաւ ու կառախուժին ուրիշ մէկ կողմը գնաց: Ուղևոր մը երբ կառքը մտաւ, առաւ այդ լրագիրը և սկսաւ կարդալ: «Ինչո՞ւ առիք լրագիրը, ատիկա իմն է», ըսաւ կասեցուցիչը հպարտութիւնով մը, երբ վայրկեան մը ետքը ետ դարձաւ և լրագիրը

չգտաւ նստարանին վրայ: Ուղևորը անմիջապէս ներում խնդրեց լրագիրը առած ըլլալուն համար, և դանդաղ վերադարձուց, նաև դրեց կասեցուցիչին թիւը: Մէկ երկու օր ետքը անքաղաքավար գործաւորը շոգեկանքի վերատեսչին գրասենեակը կանչուեցաւ: «Ասեցի որ երէկ չէ առջի օրը անքաղաքավարութեամբ վարուեր ես մեր ուղևորներէն մէկուն հետ», ըսաւ վերատեսուչը: Այնուհետև գործաւորը սապէս պատմեց դէպքը, «Իմ լրագիրս էր անկա, բնապէս կը կարծէի թէ ես իրաւունք ունէի իմ լրագրիս վրայ»: «Ատիկա չնչին խնդիր մըն է, ատիկա է մին այն դէպքերէն, ուր աղէկ է իրաւունքը գոհել քաղաքավարութեան համար», ըսաւ վերատեսուչը: «Կառուղիդ քիչ առաջ թերադրած էր որ քեզ կառախումբին մէջ աւելի պատուաւոր տեղ մը դնենք: Այդ առիթը ներկայացաւ այսօր, և եթէ լրագրի այդ միջադէպը պատահած չըլլար, անոր թերադրութեան համար մատ քեզ լաւ տեղ մը պիտի դնէի»:

Մուշ լրագիր մը եղաւ այն զոր կասեցուցիչը պահանջեց այն անձէն որ միամտութեամբ մը առած էր զանկա նստարանին վրայէն, բայց անկէ որչափ աւելի սուղի կը նստին շատ մը ուրիշ չնչին բաներ, որոնց առթիւ մարդիկ կը պնդեն թէ իրենցն է իրաւունքը:



ԱՄԷՆԵՆ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԶԻՆ

Հետևեալը գրած է բոլորովին վստահելի մէկը: Պիտի չիրնայինք հաւատալ անոր եթէ չգիտնայինք թէ ո՛վ է գրողը:

Զինն անունն է ձիւմ ֆի, ինչպէս կը հեգէ ինք: Քանի մը շաբաթ ի ցոյց դրուեցաւ Պոսթընի մէջ: Շաբաթ օր էր երբ անոր այցելեցի, և հոն տղայոց բազմութիւն մը կար: Բայց հազարաւորներու համար որոնք այն տեղ ներկայ չէին, կ'ուզեմ նկարագրել այս զարմանալի ձին: Գոյնով ախտա (տորու) է և տասներմէկ տարեկան: Անոր նախորդ տէրը և հիմակուան ցուցադրողը, Տր. Ռեյլերմ ֆի անասնաբույժը, ջանք չինայեց և իր բոլոր հանձարը թափեց տարիներով զանկա կըթելու համար: Երբ տըթորին ըսի թէ ձիւն կատարելու խաղերը պիտի դիտեմ աղայոց օգուտին համար, մարդասիրաբար աթոռ մը հրամացուց ինձի բեմին առջև, վասն զի կը փափաքէի տեսնել թէ ինչ միջոցներով ձին կը հասկնար իր ընելիքը:

Յուցադրողին կարճ մէկ բանախօսութեանն ետքը ձին դնաց զանգակ մը առաւ իր ակուններով, և բեմին վրայ վազվառեց զանգակը ուժգին ցնցելով: Յետոյ կարգը եկաւ անոր հեգելու դասին: Բեմին ետեւի կողմը գտնուող դարակներէն իր չըթուներով կ'առնէր ունէ գիր զոր ցուցադրողը կամ ունկնդիրները կ'ըսէին, և կու տար կամ կը նետէր անոր: «Սնունդ հեգէ», ըսաւ տըթորը: Գիրերը մէկիկ մէկիկ իրարու ետեւ տուաւ օգնական տղին որ զանոնք շարեց հանդիսատեսներուն առջև պղտիկ սեղանի մը վրայ: Բայց երբ ձիւմ բերաւ իր անունին վերջին գիրը, ինք անձամբ դրաւ անոր յատուկ տեղը նախորդ գիրերուն ծայրը: «Պ» (տղայ) հեգէ», ըսուեցաւ, և անկա արագ մը և դիւրաւ հեգեց ինչպէս պիտի ընէիք դուք: «Կըւ (աղջիկ) հեգէ», ըսուեցաւ, և հեգեց: «Հիմա կըւ (աղջիկներ) ըրէ ատիկա», ըսուեցաւ: Անմիջապէս գիրը աւելցուց անոր ծայրը: Այնուհետև հանդիսականներէն վեց փոքր տղոց ըսուեցաւ որ առաջ գան և ձիւն հետ մըցին հեգելու մէջ: Մէկ տղար մըցանակ պիտի տրուէր, զոր ձիւմ բերաւ գգրոցէ մը: Գտուար բառեր առաջարկուեցան, զորոնք աղաքը վստահութեամբ չէին կրնար հեգել, բայց ձիւմ գոց գիտէր զանոնք: Տղաքը բառ մը սխալ հեգեցին, ձիւմ զանկա յիտակ հեգեց, և մըցանակը առնելով իրեն յատուկ գգրոցին մէջ դրաւ զանկա: Մէկիկ մէկիկ պատասխանեց հետևեալ հարցումներուն, թէ Տարուան մէջ քանի օր կայ. նահանջ տարուան մէջ քանի օր. ամսուան մէջ. շաբաթուան մէջ. քանի դպրոցական օր կայ մէկ շաբաթուան մէջ. շաբաթը քանի անգամ եկեղեցի երթալու ենք (Պատասխան — 1). քանի շաբաթ կայ ամսուան մէջ, քանի շաբաթ տարուան մէջ. քանի օր՝ ամսուան մէջ (Պատասխան — Փետրուարին՝ 28 օր): Այնուհետև եկաւ բուն թուարանական դասը, ամէնուն մէջ աւելի զարմանալի և ամէնէն յաջողը, վասն զի հարցումները հանդիսականները կը հարցնէին: «Չորս անգամ հինգ», ըսաւ փոքրիկ աղջիկ մը: ձիւմ առաւ 20ը և բերաւ: Հարցուեցաւ հետզհետէ, Հինգ անգամ հինգ, հինգ անգամ ինը, երկու անգամ տասներկու. և անմիջապէս պատասխանեց ձին: «Տասներկուքէն եթէ չորս հանուի, ի՞նչ կը մնայ», հարցուց կուշտս գտնուող փոքր տղայ մը: Եւ ձիւմ ծը

բերաւ: «Երկու անգամ տասը» հարցուեցաւ: Անոր պատասխանը սեղանին վրայ չէր տեսնուեր, 20ը արդէն հոն գտնուողներէն մէկուն ձեռքն էր, որմէ առաւ ձիւմ: Յետոյ մէկը հարցուց, «Երկու անգամ տասը նուազ քսան ի՞նչ կ'ընէ», և ես հետաքրքրութեամբ դիտեցի թէ ձիւմ ի՞նչ պիտի ընէր այս խնդիրը: Մէկ բան միայն կար զոր կրնար ընել և ըրաւ. անմիջապէս բերաւ զոր մը: Աւելի ետքը տրուած ցուցադրութեան մը մէջ աւելի դժուար «օրինակներ» առաջարկուեցան լուծել, զորոնք ձիւմ լուծեց շուտ մը: Յայտնի է թէ ձիւմ կը մտածէր ամէն անգամուն: «21 բաժնէ 7ով», ըսուեցաւ, ձիւմ բերաւ 3: «2 անգամ 15 նուազ 16», և ձիւմ չվարանելով բերաւ 14: Հարցուեցաւ թէ 4 անգամ 4 ի՞նչ կ'ընէ: Սեղանին վրայ 16 չգտնելով, պարագտեղ փնտռեց զանկա տղոց ձեռքերուն մէջ, և յետոյ վերադառնալով սեղանին, զանկա գտաւ գետինը:

Միայն անգամ մը սխալի պէս բան մը ըրաւ: Հարցումն էր 5 անգամ 4: ձիւմ բերաւ 24: Բայց յայտնի եղաւ թէ տեսաւ իր սխալը իսկոյն, վասն զի ետ դարձաւ և բերաւ 20, և զուարճալի փոքրիկ ոտուով մը ըրաւ իր առջևի ոտքերով, իբր թէ ըսել ուզելով, «Ո՛հ, ներքեք, ի՞նչ անմտութիւն ըրի»: Չարմանալիքը իր բարձրագոյն աստիճանին հասաւ երբ մէկը պոռաց, «4էն հանէ 7»: ձիւմ մտիկ ըրաւ բայց տեղէն չարժեցաւ, միայն իր գլուխը շարժեց ծանրութեամբ որ կը նշանակէր, «Ո՛չ պարոն, իմ հետս չեք կրնար խաղալ»:

Չանաղան գոյներով մանր քարտեր դրուեցան պղտիկ դարակին վրայ, և անոնց անունները յիշուելուն պէս կարմիր, կանաչ, կապոյտ, ևն. կ'երթար կը գատէր, կ'արիչ հետաքրքրաշարժ խաղ մըն ալ ըրաւ իր ակուններով: Գլուխը աման մը ջուրի տակ խոթեց և, առանց մէկ կաթիլ խոթելու, արժաթ տղար մը առաւ անոր յատուկէն և հանգիսականներուն ցուցուց: Ըսուեցաւ իրեն որ տղարը իր պահանջողը զնէ, և գգրոցէն անձեռուց (փէշկիր) մը բերէ, որով տըթորը գգուցութեամբ արեք շուրջ անոր երեսէն, և անոր բերանը դրաւ կտոր մը խընձոր, անկէ ետև ձիւմ բացաւ գգրոցը և նորէն տեղը դրաւ անձեռուցը:

Տարեկան բաժանորդագին՝ 6 դաս. արծաթ. կանխիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիոնապոլ Բնկերութեան կողմէն Արտոնատէր ձ. Բ. Կրիտ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ԳՅՈՒԶՈՒՆ
 Յինաանքլար Եօզուշու, Ամերիկան Խան